



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

2 հունիսի 2021թ. թիվ 818

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 1884 ՀՐԱՄԱՆԻ
ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության գրասենյակի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 02/45.7/17921-2021 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրեր հաստատելու մասին» թիվ 1884 հրամանի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) թիվ 91 հավելվածի «2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Կազմակերպում է տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրագործման գործընթացում Մարզպետարանի գործունեությանն աջակցությունը,
2. Ապահովում է Մարզպետարանի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,
3. Կազմակերպում է զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին Մարզպետարանի մասնակցության նախապատրաստության աշխատանքները,
4. Ապահովում է տարածքային կառավարման մարմնի կողմից պաշտպանության նպատակով մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների կատարման ու զինված ուժերի զորահավաքային ծավալմանն աջակցության ապահովման գործընթացին մասնակցության աշխատանքները,

5. Կազմակերպում է տարածքային կառավարման մարմնի կողմից մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորմանը մասնակցության ու դրա իրագործմանն օժանդակման գործընթացին աջակցությունը,
6. Ապահովում է տարածքային կառավարման մարմնում աշխատող պահեստագորայինների ամրագրման աշխատանքների իրականացումը, կազմակերպում նրանց զինվորական հաշվառման, պահեստագորային պատրաստության միջոցառումներին, պարտադիր զինվորական ծառայության և զորահավաքային զորակոչերին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,
7. Ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով տարածքային կառավարման մարմինների համար սահմանված միջոցառումների իրականացման գործընթացը:
8. Կազմակերպում է Բաժնին վերաբերվող գաղտնիություն պարունակող հանձնարարականների կատարումը, փաստաթղթերի մշակումը,
9. Կազմակերպում է մարզի տարածքում այլընտրանքային աշխատանքային ծառայություն իրականացնող զորակոչիկների հետ կապված աշխատանքները:

Իրավունքներ՝

1. զորահավաքային մարմնին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման առնչությամբ կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմնի պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների, աշխատանքների արդյունքներից ելնելով՝ մարմնի ղեկավարին ներկայացնել առաջարկություններ.
2. մարմնի ղեկավարի համաձայնությամբ հանդես գալ միջգերատեսչական կամ փոխգործակցային մակարդակում՝ որպես մարմնի ներկայացուցիչ.
3. առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.
4. խաղաղ և ռազմական դրության ժամանակ վերահսկել Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության՝ զորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված զորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքները.
5. իր իրավասության սահմաններում համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները:

Պարտականություններ՝

1. կազմակերպել զորահավաքային պլանների մշակումը և ապահովել դրանց կատարումը.
2. մասնակցել պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստագորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացին.
3. մասնակցել զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին.

4. կազմակերպել Լոռու մարզպետարանում աշխատող պահեստագորայինների ամրագրումը.
5. կազմակերպել մարզպետարանի գործունեությունը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմին փոխադրելուն.
6. պաշտպանության նպատակով կազմակերպել մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների իրականացումը, աջակցել զինված ուժերի զորահավաքային ծավալմանը.
7. օժանդակել մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորմանն ու դրա իրագործմանը.
8. մարզի վարչական տարածքում ապահովել և կազմակերպել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.
9. զորահավաքային նախապատրաստության շրջանակներում և զորահավաքի ժամանակ օժանդակել զինվորական կոմիսարիատներին զորահավաքային խնդիրների լուծմանը.
10. կազմակերպել զորահավաքի ժամանակ զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցելը, տրանսպորտային միջոցները հավաքակայան կամ զորամասեր առաքելը, զորահավաքային պլանների համաձայն՝ շենքեր, կառույցներ և հողամասեր, հաղորդակցության, տրանսպորտային և այլ նյութական միջոցներ տրամադրելը:
11. Գնահատել ենթակա աշխատողների կողմից կատարված աշխատանքները.»

2) թիվ 92 հավելվածի՝ «2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Մասնակցում է տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրագործման գործընթացում Մարզպետարանի գործունեությանը,
2. Իրականացնում է Մարզպետարանի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցում այդ պլանների իրագործմանը,
3. Մասնակցում է զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին Մարզպետարանի մասնակցության նախապատրաստության աշխատանքներին,
4. Մասնակցում է տարածքային կառավարման մարմնի կողմից պաշտպանության նպատակով մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների կատարմանը ու զինված ուժերի զորահավաքային ծավալմանն աջակցության ապահովման գործընթացին,
5. Մասնակցում է տարածքային կառավարման մարմնի կողմից մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորմանը ու դրա իրագործման օժանդակմանը,
6. Իրականացնում է տարածքային կառավարման մարմնում աշխատող պահեստագորայինների ամրագրման աշխատանքների կատարումը,

մասնակցում է նրանց զինվորական հաշվառման, պահեստագորային պատրաստության միջոցառումներին, պարտադիր զինվորական ծառայության և զորահավաքային զորակոչերին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներին զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

7. Մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով տարածքային կառավարման մարմինների համար սահմանված միջոցառումների իրականացմանը.
8. Իրականացնում է Բաժնին վերաբերվող գաղտնիություն պարունակող հանձնարարականների կատարումը, փաստաթղթերի մշակումը.
9. Մասնակցում է մարզի տարածքում այլընտրանքային աշխատանքային ծառայություն իրականացնող զորակոչիկների հետ կապված աշխատանքներին:

Իրավունքներ՝

1. զորահավաքային մարմին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման առնչությամբ մասնակցել քննարկումների, խորհրդակցությունների, արդյունքներից ելնելով՝ բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ.
2. առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների բարելավման վերաբերյալ.
3. խաղաղ և ռազմական դրության ժամանակ հետևել Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության՝ զորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված զորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքներին.
4. իր իրավասության սահմաններում մասնակցել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումներին:

Պարտականություններ՝

1. մասնակցել զորահավաքային պլանների մշակմանը և դրանց կատարմանը.
2. մասնակցել պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստագորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացին.
3. մասնակցել զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին.
4. իրականացնել Լոռու մարզպետարանում աշխատող պահեստագորայինների ամրագրումը.
5. մասնակցել մարզպետարանի գործունեությանը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի փոխադրելուն.
6. պաշտպանության նպատակով մասնակցել մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների իրականացմանը.
7. մասնակցել մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորմանն ու դրա իրագործմանը.
8. մարզի վարչական տարածքում մասնակցել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը.

9. գորահավաքային նախապատրաստության շրջանակներում և գորահավաքի ժամանակ օժանդակել զինվորական կոմիսարիատներին գորահավաքային խնդիրների լուծմանը.
10. մասնակցել գորահավաքի ժամանակ գորահավաքային գորակոչի ենթակա քաղաքացիների ծանուցմանը.»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X 

ԿԱՍՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2021թ. հունիսի 2
ք.Վանաձոր